

**ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ
ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
(«ԷՐԵՐՈՒՆԻ» ԱՐԳԵԼՈՑԻ ՕՐԻՆԱԿՈՎ)**

Զեկուցող՝ Գ.Գյուրջյան

«Էրեբունի» պատմահնագիտական

արգելոց-թանգարանի տնօրեն

Ներկայացնելով «Էրեբունի» ամրոց-միջնաբերդի հրատապ խնդիրներն ու անհրաժեշտ գործողությունների շարքը՝ կփորձենք համակողմանիորեն քննարկել Էրեբունիի արդիականացման մի նախագիծ, որի նպատակը ոչ միայն կառավարման և հուշարձանի ամրապնդումն է, այլ նաև հասարակության համար հուշարձանի նշանակությունը բարձրացնելով՝ նրա տնտեսական բնութագրիչների բացահայտումն է՝ կառավարման նոր հեռանկարով:

«Էրեբունի» արգելոց-թանգարանը հիմնադրվել է 1968 թ.-ին և միավորում է Հայաստանի հնագիտական ժառանգության երեք հնավայրեր՝ Շենգավիթը, Կարմիր բլուրը և Էրեբունին: Այս եռյակում Էրեբունին, թերևս, մի առանձնակի նշանակություն ունի. չէ որ այստեղ է պահվել մեր քաղաքի տարիքը: 1930-1950-ական թվականների պարբերական պեղումներից հետո Էրեբունիի հայտնաբերումը ոչ միայն գիտական հանրության, այլ ամբողջ մշակութասերների ու նաև երևանցիների հպարտությունը դարձավ: Քաղաքի բնակիչները դարձան պատմական քաղաքի բնակիչ, որը շուտով կբոլորի իր 2800-րդ ամյակը: Երևանը դասվեց աշխարհի հնագույն մայրաքաղաքների շարքում և սկսեց զարգանալ ոչ միայն որպես արդյունաբերական, գիտական, սպորտի ու ժամանցի քաղաք, այլ որպես իր սահմաններում հնագույն քաղաքակրթության այնպիսի դրվագի կրող, ինչպիսին «Էրեբունի» ամրոցն էր: Ահա թե ինչու այս ծրագրի նպատակն է անել ամեն ինչ, որ մեր քաղաքը չկորցնի այս պատվավոր կարգավիճակը և Երևան-Էրեբունի բառակապակցությունը երբևէ չթուլանա:



Հանդիսանալով Վանի թագավորության ռազմավարական նշանակության կարևորագույն հենակետ՝ Էրեբունին այսօր էլ մնում է հին աշխարհի ռազմապաշտպանական ճարտարապետության և ռազմական քաղաքների հաջող պահպանված օրինակ, որի նշանակությունը պատմության ընթացքում երբևէ չի կարող նվազել: Այս համատեքստում «Երևան 2025»-ի շրջանակում մասնավոր անդրադարձ կկատարենք Երևանի բնօրրանը հանդիսացող Էրեբունի հնավայրի մի քանի կարևորագույն խնդրի:

Էրեբունի. պատմական ակնարկ

Էրեբունուց հայտնաբերված սեպագիր արձանագրությունը փաստում է, որ այն հիմնադրվել է մ.թ.ա 782 թ.-ին Արգիշտի Ա արքայի կողմից, որպես ի սարսափ թշնամու: Քաղաքի միջնաբերդի կառուցումը Արին բերդ բլրին զբաղեցնում է 3 հա, իսկ քաղաքային թաղամասերը տարածվել են բլրի հյուսիսային լանջին և արևելյան կողմում՝ զբաղեցնելով շուրջ 100 հա: 1968 թ.-ին, երբ Էրեբունին տոնեց իր 2750- ամյակը, այն, միանշանակորեն, և գիտնականների, և հնագետների ու ճարտարապետների կողմից ընկալվեց որպես Երևանի ծննդավայր, որն անմիջապես ընդգրկվեց խորհրդային երկրի տուրիստական երթուղիներում՝ Երևան բերելով հազարավոր զբոսաշրջիկների: Պետք է հաշվի առնել նաև, որ Էրեբունին հանդիսանում էր միակ այցելելի հնագիտական հուշարձանը, որտեղ այցելուին տրվում էին բացատրություններ հողի տակից բացված քաղաքի վերաբերյալ: Էրեբունին, անկասկած, դարձավ Երևանի այցեքարտը՝ մայրաքաղաքում 19-20-րդ դարում ստեղծված այլ սինվոլների հետ միաժամանակ: Երևանի քաղաքային իշխանությունն, անշուշտ, կարևորում է իր սահմաններում այսպիսի եզակի հուշարձանի գոյությունը, և վերջին տարիների Երևանի զարգացման ծրագրերի երկարատև քննարկումների արդյունքում հանդես է եկել ներդրումներ պահանջող մի նախագծով, որի հիմնական բաղադրիչները հետևյալն են.

Հնավայրի սահմանագատումը որպես առաջնահերթ խնդիր

Հնավայրի զբաղեցրած տարածքի սահմանագատումը ցանկապատով առաջին հերթին հուշարձանի անվտանգության ապահովման խնդիր է, ինչպես նաև հարավային և արևմտյան կողմերից մուտքերի կազմակերպումը հուշարձանի տարածքը զերծ կպահի հատկապես ավտոմեքենաների կողմից պատճառվող մեխանիկական վտանգներից, ինչը ինտենսիվորեն նպաստում է մակերևույթի մաշվածքին: Ցանկապատումը և արևմտյան ու հարավային կողմերից մուտքերի կազմակերպումը կկրճատի հնավայրին միտումնավոր կամ ոչ դիտավորությամբ վնաս պատճառելու ռիսկերը: Ցանկապատման հրատապությունը պայմանավորված է նաև նրանով, որ այն պատկանում է բեկուն և անկման հակվածություն ունեցող հնավայրերի թվին՝ պայմանավորված շինանյութի, շինությունների և գետնի երեսպատվածքի փխրունությամբ: Վերջին տարիներին դիտարկումները թույլ են տալիս եզրակացնել, որ շրջակա բնակիչների կողմից ոչ աշխատանքային ժամերին հնավայրը ծառայում է որպես հավաքատեղի, ինչը ևս բացասական գործոն է պահպանության տեսանկյունից և հիմնավորում է ցանկապատման հրատապությունը:




«Էրեբունի» միջնաբերդի վերականգնումը

Միջամտության ցանկացած տեսակ որևէ հուշարձանում՝ լինի դա վերականգնում, մասնակի վերականգնում, ամրակայում թե կոնսերվացիա, առաջին հերթին նպատակ ունի ապահովել հուշարձանի կայուն պահպանություն՝ նվազագույնս վնասելով նրա իսկությունը և անվտանգությանը: Այս իմաստով Էրեբունիում առաջարկվող վերականգնումը ևս բացառություն չէ: Ուստի առաջարկվող գործողություններն են.

- Ամրոցի պատերի փլուզված հատվածների մասնակի վերականգնում և ամրակայում

- Խալդի աստծո տաճարի և կից զիկուրատի վերականգնում, որմնանկարների տեղադրում
- Արգիշտի արքայի պալատի և կից զիկուրատի վերստեղծում և որմնանկարների իրականացում
- Կարասային սրահի մի հատվածի վերականգնում




Սպասարկման ենթակառուցվածքների ստեղծում

Ժամանակակից աշխարհում հնավայրերը, որոնց բացատրական մեկնաբանությունը տևում է միջին հաշվով 1-2 ժամ, չեն կարող չունենալ սպասարկման ենթակառուցվածքներ, որոնց առկայությունը թույլ է տալիս առավել կազմակերպված դարձնել այցելուների ընդունումը և վերահսկելի՝ նրանց տեղաշարժը: Հատկապես ամռան տապին Էրեբունիի շոգը շատերի համար ցանկալի է դարձնում հետիոտնի փոխարեն այլ փոխադրամիջոցներով ծանոթությունը հնավայրին (ձիակառքեր, քարշակներ), հատկապես, որ տարեկան այցելուների մեջ քիչ չէ մեծահասակների և շարժողական խնդիրներ ունեցողների թիվը:

Հնավայրի ամֆիթատրոնի կազմակերպումը, որի տեղը արդեն իսկ համաձայնեցված է Երևանի քաղաքապետարանի հետ, հուշարձանի համար լրացուցիչ եկամուտներ ապահովելու միջոց է. մեր հաշվարկներով այն արգելոց-թանգարանին կրերի միջինը


մոտ 140.0 մլն. դրամ տարեկան եկամուտ՝ ուղղակիորեն նպաստելով շատ խնդիրների լուծմանը: Այս օրինակը բազմիցս փորձարկվել և քննություն է գտել աշխարհահռչակ այլ քաղաքային հնավայրերում՝ Աթենքի Ակրոպոլիսում, Պերսեպոլիսի օրինակը Պարսկաստանում, բուրգերի ներկայացումը Կահիրեում, Բորոդինայի ճակատամարտը Մոսկվայում և այլն: Սպասարկման ենթակառուցվածքների վճարովի հիմունքներով աշխատանքը որոշակի եկամուտ ապահովելով թանգարանին՝ կթեթևացնի նաև քաղաքային իշխանության ֆինանսական բեռը Էրեբունիի մասով: Ուստի այս հատվածում առաջարկվում է.

- Միջնաբերդի արևելյան դարպասի կազմակերպում
- Միջնաբերդ տանող գլխավոր ուղղու կազմակերպում
- Միջնաբերդի արևելյան ավտոկանգառի կազմակերպում
- Սպասարկման օբյեկտների կազմակերպում
- Սրճարանների և առևտրի կետերի կազմակերպում
- Ավտոկառերի կայանատեղիի կազմակերպում
- Ձիակառքերի կայանատեղիի կազմակերպում
- Միջանկյալ հարթակի կազմակերպում
- Բացօթյա ամֆիթատրոնի կազմակերպում
- Միջնաբերդի մուտքի կազմակերպում
- Միջնաբերդ տանող երթուղիների և տեսակների կազմակերպում
- Ձիակառքերի երթուղիների կազմակերպում
- Ավտոկառերի երթուղու կազմակերպում



Ուրարտական խոհանոցի ստեղծում

Հուշարձանային վայրերում ավանդական խոհանոցների կազմակերպումը բխում է նյութական և ոչ նյութական ժառանգությունների անքակտելի կապից: Հնագույն ժամանակներում ևս դրանք գոյություն են ունեցել կողք-կողքի: Առաջարկվող ուրարտական խոհանոցը չի կազմակերպվելու բուն ամրոցի տարածքում. այն նախատեսվում է բլրի ստորոտին հուշարձանի պահպանական գոտուց դուրս և նախատեսվում է ուրարտական տան հորինվածքով շինության տեղադրում՝ օգտագործելով Էրեբունիի ավանդական շինանյութերը: Այն ավելի շուտ ուրարտացու տուն է հիշեցնելու, որտեղ այցելուն կարող է վերականգնված տեսնել ուրարտական սեղանը՝ խոհանոցային սպասք, աթոռներ, և համտեսել ուրարտական հնավայրերից հայտնաբերված սննդամթերքների մնացորդների հիմքի վրա մատուցվող ուտեստներ: Խոհանոցի եկամուտը, բնականաբար, կրկին հավելյալ օգնություն է արգելոց-թանգարանին:



Ամֆիթատրոնի տեղադրում

Ամֆիթատրոնի տեղադրումը նպատակ ունի կազմակերպել հնավայրի պատմության լուսաձայնային մեկնաբանմամբ գիշերային ներկայացում՝ հայերեն, անգլերեն, ռուսերեն լեզուներով: Ներկայացումը հանդիսատեսին թույլ կտա պատկերացում կազմել քաղաքի հիմնադրման, քաղաքային կյանքի և քաղաքի կործանման պատմությունը: Ամֆիթատրոնը նախատեսվում է տեղադրել միջնաբերդի մուտքի հանդիպակաց բլրի հյուսիսային լանջին՝ ուղիղ մուտքի դիմաց:

Որպես ներկայացման գլխավոր ռեկվիզիտ կծառայեն միջնաբերդն իր կառույցներով և բլուրը: Ներկայացման երաժշտական ձևավորումը, լուսային էֆեկտները կհամադրվեն հնավայրի առանձին շինությունների վերակազմությունների հոլոգրաֆիկ պատկերներով: Ներկայացումները կլինեն սեզոնային՝ նախատեսված տարվա բարենպաստ եղանակի համար: Ներկայացման սցենարը կնպաստի հնավայրի պահպանության նկատմամբ հարգանքի ձևավորմանը, այն մատչելի կլինի

հասարակության ամենատարբեր անդամների համար: Միաժամանակ ներկայացումը պետք է դիտել որպես կրթական ռեսուրս՝ ցանկացած տարիքի այցելուի համար:



«Էրեբունի» արգելոց-թանգարանի շենքի վերակառուցում

Թանգարանի շենքի, մասնավորապես մշտական ցուցադրության ջերմախոնավային ռեժիմի ապահովում՝ անհրաժեշտ սարքավորումների տեղադրմամբ:

Նոր ցուցադրության պատվիրում՝ ներկայումս գործող՝ դեռևս 1982թ.-ին հաստատված ցուցադրության փոխարեն, ժամանակակից ցուցադրություններին հարիր մոտեցումներով և միջոցներով:

Արդեն գործում է «Պատանի Հնագետ» դպրոցը

Հնավայրի հյուսիսային մասում դպրոցականների համար ստեղծվել է պեղումների հրապարակ՝ վճարովի դասընթաց կազմակերպելու նպատակով: Այս դպրոցի նպատակն է դպրոցականներին ծանոթացնել հնագետի մասնագիտության նախնական հասկացություններին, հետաքրքրություն արթնացնել դեպի հնագետի մասնագիտությունը, երիտասարդներին կողմնորոշել դեպի հնագիտությունը: Ծրագիրը ոչ այնքան եկամտաբեր է, որքան կարևոր է որպես կրթական նախաձեռնություն և մարկեթինգի գործիք:



«Էրեբունի» արգելոց-թանգարանը առաջիններից էր, որ կառուցեց թեքահարթակ սահմանափակ կարողություններ ունեցող մարդկանց համար:

Հանդես գալով այս զեկույցով մենք լիահույս ենք, որ Էրեբունու նշանակությունը կասկածի տակ չի դրվում ոչ գիտական, ոչ մշակութային, և ոչ էլ պատմական առումներով: Այն իրավամբ Երևանի բնօրրանն է և մենք բոլորս ունենք Էրեբունին սերունդներին հանձնելու պարտավորությունը: Սակայն ոչ բավարար ֆինանսական միջոցները մեզ թույլ չեն տալիս առաջ գնալ, և մենք ունենք ներդրումների կարիք, որպեսզի ունենանք ժամանակակից տեղադրումներով ապահովված, գրավիչ և այցելուների հետաքրքրությունների կենտրոնում գտնվող հնավայր: